# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

27 Օգոստոսի 2026 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Գրիգոր Կարապետյանը, Աշոտ Անտինյանը, Շուշանիկ Հակոբյանը, Էմմա Գասպարյանը, Սերյոժա Սարդարյանը, Արայիկ Քոչարյանը և Ալվարդ Ավետիքյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը և Սերյոժա Եսայանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Պավլիկ Պապինյանը և Արշակ Սրապյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Նաիրա Հարությունյանը:

Նիստին մասնակցում էին Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով գրանցված /նիստին մասնակցելու ցանկություն հայտնած/ «Քաղաքացու ձայնը» լրատվամիջոցի լրագրող Նինա Մամաջանյանը և օպերատոր Գևորգ Քոչինյանը:

***Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 12 անդամ***

**ՆԻՍՏԸ** - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.00-ին նիստը հայտարարեց բացված: Նա ողջունեց ներկաներին և առաջարկեց իր նախաձեռնությամբ օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես 8-րդ հարց և որոշման նախագծ հետևյալ բովանդակությամբ.

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Միեր Մամիկոնի Մատինյանին, Մարինե Մամիկոնի Մատինյանին և Վարդան Մամիկոնի Մատինյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

**Ս. Կոստանդյանը առաջարկեց քվեարկել օրակարգում հարց ընդգրկելու համար:**

***Քվեարկությամբ, կողմ՝ 12 ձայների համաձայնությամբ 8-րդ հարցը ընդգրկվեց օրակարգում:***

**Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը՝ ավելացված որոշման նախագծով:**

***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 136-Ա/:***

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.**

**Հաստատված օրակարգը՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2026թ-ի օգոստոսի 27-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի վարչական սահմաններում գտնվող Հանքաձորի հանքային դաշտի տարածքում արդյունաբերական նշանակության հանքայնացում հայտնաբերելու նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

3. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասով սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Համբարձում Ալբերտի Ծատուրյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Վահե Սարգսի Գևորգյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Արմեն Համլետի Բարսեղյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Միեր Մամիկոնի Մատինյանին, Մարինե Մամիկոնի Մատինյանին և Վարդան Մամիկոնի Մատինյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

**ԸՆԹԱՑՔԸ՝**

**1. ԼՍԵՑԻՆ -** ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի վարչական սահմաններում գտնվող Հանքածորի հանքային դաշտի տարածքում արդյունաբերական նշանակության հանքայնացում հայտնաբերելու նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով «Բարիթա» ՍՊԸ-ի 07.07.2026թ-ի ելք № 02 գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 11.08.2026թ-ին Փամբակ համայնքի Եղեգնուտ, Դեբեդ և Վահագնի բնակավայրերում անցկացված հանրային լսումների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները և տեսաձայնագրությունները, տալ նախնական համաձայնություն «Բարիթա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի վարչական սահմաններում գտնվող Հանքածորի հանքային դաշտի տարածքում արդյունաբերական նշանակության հանքայնացում հայտնաբերելու նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 10 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 137-Ա/:***

**2. ԼՍԵՑԻՆ -** Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողն առաջարկեց տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող նախագծով ներկայացված 5 լոտ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն էլեկտրոնային աճուրդով օտարելուն:

Եթե էլեկտրոնային աճուրդը չի կայանում, ապա լոտի մեկնարկային գինը սահմանվում է հետևյալ կերպ՝ համայնքային անշարժ գույքի օտարման դեպքում՝ երկրորդ էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանվում է գնահատված արժեքի 85 տոկոսի չափով, չվաճառվելու դեպքում՝ երրորդ և հերթական էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանվում է գնահատված արժեքի 70 տոկոսի չափով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 138-Ա/:***

**3. ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասով սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով «Էրիկ Եղոյան Էդիկի » ԱՁ-ի դիմումը՝ ավազի հանքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով սերվիտուտի իրավունքով հողամաս տրամադրելու մասին, տալ համաձայնություն ավազի հանքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող 06-102-0012-0020 կադաստրային ծածկագրով 0,224132 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը «Էրիկ Եղոյան Էդիկի» ԱՁ-ին սերվիտուտի իրավունքի օգտագործման տրամադրելուն: Սերվիտուտի տարեկան վճարի չափը սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ: Համայնքի ղեկավար Ս.Կոստանդյանին առաջարկել «Էրիկ Եղոյան Էդիկի » ԱՁ-ի հետ կնքել սերվիտուտի պայմանագիր 50 տարի ժամկետով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 139-Ա/:***

**4. ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Համբարձում Ալբերտի Ծատուրյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Համբարձում Ալբերտի Ծատուրյանի դիմումը, տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող 06-023-0249-0010 կադաստրային ծածկագրով 0,11358 հա հողամասին կից գտնվող 06-023-0249-0023 կադաստրային ծածկագրով 0,11327 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահողը ուղղակի վաճառքով Համբարձում Ալբերտի Ծատուրյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 127712 (մեկ հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր տասներկու) ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 140-Ա/:***

**5. ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Վահե Սարգսի Գևորգյանին օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Վահե Սարգսի Գևորգյանի դիմումը տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող 06-070-0251-0016 կադաստրային ծածկագրով 0,280004 հա հողամասին կից գտնվող 06-070-0251-0017 կադաստրային ծածկագրով 0,23261 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Վահե Սարգսի Գևորգյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 40126 (քառասուն հազար մեկ հարյուր քսանվեց) ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 141-Ա/:***

**6. ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ուղղակի վաճառքով Արմեն Համլետի Բարսեղյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Արմեն Համլետի Բարսեղյանի դիմումը, տալ համաձայնություն նրա կողմից վարձակալած, Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող 06-023-02121-0576 կադաստրային ծածկագրով 0,43215 հա համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3-րդ կարգի վարելահողը գնման նախապատվությամբ, ուղղակի վաճառքով նրան օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել համաձայն շուկայական գնահատության՝ 2 500 000 (երկու մլն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 142-Ա/:***

**7. ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Միեր Մամիկոնի Մատինյանին, Մարինե Մամիկոնի Մատինյանին և Վարդան Մամիկոնի Մատինյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Միեր Մամիկոնի Մատինյանի, Մարինե Մամիկոնի Մատինյանի և Վարդան Մամիկոնի Մատինյանի դիմումը, տալ համաձայնություն նրանց սեփականության իրավունքով պատկանող 06-070-0402-0004 կադաստրային ծածկագրով 0,3094 հա հողամասին կից գտնվող 06-070-0402-0003 կադաստրային ծածկագրով 0,12330 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ

կարգի խոտհարքն ուղղակի վաճառքով Միեր Մամիկոնի Մատինյանին, Մարինե Մամիկոնի Մատինյանին և Վարդան Մամիկոնի Մատինյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 148 885 (մեկ հարյուր քառասունութ հազար ութ հարյուր ութանասունհինգ) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 143-Ա/:***

***Համայնքի ղեկավարը հայտարարեց, որ օրակարգի հարցերը սպառվել են և նիստը համարվում է փակված:***

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ____________

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ ____________

ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ ____________

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ ____________

ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ ____________

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ ____________

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ ____________

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ ____________

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ ____________

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ ____________

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ ____________

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 136-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026Թ-Ի ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2026թ-ի օգոստոսի 27-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2026թ-ի օգոստոսի 27-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի վարչական սահմաններում գտնվող Հանքաձորի հանքային դաշտի տարածքում արդյունաբերական նշանակության հանքայնացում հայտնաբերելու նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն տրամադրելու մասին:
3. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասով սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Համբարձում Ալբերտի Ծատուրյանին օտարելու մասին:
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Վահե Սարգսի Գևորգյանին օտարելու մասին:
7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Արմեն Համլետի Բարսեղյանին օտարելու մասին:

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Միեր Մամիկոնի Անտինյանին, Վարդան Մամիկոնի Անտինյանին օտարելու մասին:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ
ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ՍԱՍՈՒՆ ՄԱՐԱՆԴՅԱՆ
ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 137-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՔԱՁՈՐԻ ՀԱՆՔԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՔԱՅՆԱՑՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետերով, «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով «Բարիբա» ՍՊԸ-ի 07.07.2026թ-ի ելք № 02 գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 11.08.2026թ-ին Փամբակ համայնքի Եղեգնուտ, Դեբեդ և Վահագնի բնակավայրերում անցկացված հանրային լսումների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները և տեսաձայնագրությունները՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն «Բարիբա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի վարչական սահմաններում գտնվող Հանքաձորի հանքային դաշտի տարածքում արդյունաբերական նշանակության հանքայնացում հայտնաբերելու նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրը:

| Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -2 |
|---|---|---|
| ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ | | ՍԱՍՈՒՆ ՄԱՐԱՆԴՅԱՆ |
| ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ | | ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ |
| ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ | | |
| ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ | | |
| ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ | | |
| ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ | | |
| ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | | |
| ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ | | |
| ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 138-Ա

### ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են հողամասեր.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0292-0001 ծածկագրով 0,05239 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանվում է 1 080 000 /մեկ մլն. ութանասուն հազար/ ՀՀ դրամ:
2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0015-0012 ծածկագրով 0,19976 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 4 300 000 /չորս մլն. երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0001-0009 ծածկագրով 0,09901 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 2 600 000 /երկու մլն. վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ:
4) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0038-0032 ծածկագրով 0,0385 հա բնակավայրերի

նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 840 000 /ութ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:
5) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0057-0023 ծածկագրով 0.02725 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 900 000 /ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3. Եթե էլեկտրոնային աճուրդը չի կայանում, ապա լոտի մեկնարկային գինը սահմանվում է հետևյալ կերպ՝ համայնքային անշարժ գույքի օտարման դեպքում՝ երկրորդ էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանվում է գնահատված արժեքի 85 տոկոսի չափով, չվաճառվելու դեպքում՝ երրորդ և հերթական էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանվում է գնահատված արժեքի 70 տոկոսի չափով:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ
ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ՍԱՍՈՒՆ ՄԱՐԱՆԴՅԱՆ
ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 139-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի տրամադրման» կարգի 46.2. կետի «դ» ենթակետով, հաշվի առնելով «Էրիկ Եղոյան Էդիկի » ԱՁ-ի դիմումը և Փամբակ համայնքի ղեկավարի առաջարկությունը ավազի հանքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով սերվիտուտի իրավունքով հողամաս տրամադրելու մասին՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն ավազի հանքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող 06-102-0012-0020 կադաստրային ծածկագրով 0,224132 հա բնակավայրերի նպատակային նշանակության, այլ գործառնական նշանակության հողամասը «Էրիկ Եղոյան Էդիկի» ԱՁ-ին սերվիտուտի իրավունքի օգտագործման տրամադրելուն:
2. Սերվիտուտի տարեկան վճարի չափը սահմանել 06-102-0012-0020 կադաստրային ծածկագրով 0,224132 հա բնակավայրերի նպատակային նշանակության, այլ գործառնական նշանակության հողամասի համար 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ:
3. Համայնքի ղեկավար Ս.Կոստանդյանին՝ «Էրիկ Եղոյան Էդիկի » ԱՁ-ի հետ կնքել սերվիտուտի պայմանագիր 50 տարի ժամկետով:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ
ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ՍԱՍՈՒՆ ՄԱՐԱՆԴՅԱՆ
ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 140-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱԼԲԵՐՏԻ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Համբարձում Ալբերտի Ծատուրյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Համբարձում Ալբերտի Ծատուրյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0249-0010 կադաստրային ծածկագրով 0,11358 հա հողամասին կից գտնվող 06-023-0249-0023 կադաստրային ծածկագրով 0,11327 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3-րդ կարգի վարելահող գործառնական նպատակային նշանակության հողամասը ուղղակի վաճառքով Համբարձում Ալբերտի Ծատուրյանին օտարելուն:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 127712 (մեկ հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր տասներկու) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ
ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ՍԱՍՈՒՆ ՄԱՐԱՆԴՅԱՆ
ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 141-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՀԵ ՍԱՐԳՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Վահե Սարգսի Գևորգյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Վահե Սարգսի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0251-0016 կադաստրային ծածկագրով 0,280004 հա հողամասին կից գտնվող 06-070-0251-0017 կադաստրային ծածկագրով 0,23261 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքով Վահե Սարգսի Գևորգյանին օտարելուն:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 40126 (քառասուն հազար մեկ հարյուր քսանվեց) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ
ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ՍԱՍՈՒՆ ՄԱՐԱՆԴՅԱՆ
ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 142-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՐՄԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Արմեն Համլետի Բարսեղյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Արմեն Համլետի Բարսեղյանի կողմից վարձակալած, Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող 06-023-02121-0576 կադաստրային ծածկագրով 0,43215 հա համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը գնման նախապատվությամբ, ուղղակի վաճառքով նրան օտարելուն:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել համաձայն շուկայական գնահատության՝ 2 500 000 (երկու մլն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ
ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ՔՈՋԱՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ՍԱՍՈՒՆ ՄԱՐԱՆԴՅԱՆ
ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 143-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՀԵՐ ՄԱՄԻԿՈՆԻ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԵ ՄԱՄԻԿՈՆԻ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԻ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Միեր Մամիկոնի Մատինյանի, Մարինե Մամիկոնի Մատինյանի և Վարդան Մամիկոնի Մատինյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Միեր Մամիկոնի Մատինյանին, Մարինե Մամիկոնի Մատինյանին և Վարդան Մամիկոնի Մատինյանին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0402-0004 կադաստրային ծածկագրով 0,3094 հա հողամասին կից գտնվող 06-070-0402-0003 կադաստրային ծածկագրով 0,12330 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 2-րդ կարգի խոտհարք գործառնական նպատակային նշանակության հողամաս ուղղակի վաճառքով Միեր Մամիկոնի Մատինյանին, Մարինե Մամիկոնի Մատինյանին և Վարդան Մամիկոնի Մատինյանին օտարելուն:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 148 885 (մեկ հարյուր քառասունութ հազար ութ հարյուր ութանասունհինգ) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ
ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ՍԱՍՈՒՆ ՄԱՐԱՆԴՅԱՆ
ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ